# Ա Ղ Օ Թ Ք

(Լերմոնտովի)

Ո՜վ Տիրամայր, այսօր մի ջերմ աղօթքով
Քո լուսազարդ սուրբ պատկերիդ յանդիման
Ես կանգնած եմ ո՛չ փըրկութեան փափագով,
Ո՛չ գոհ սըրտով, ո՛չ աղերսով քաւութեան.

Չե՛մ աղօթում ես իմ անտէր, ամայի
Կեանքիս համար՝ վըտարանդի, վըշտառատ.
Ջերմ պաշտպանիդ այս ցրտաշունչ աշխարհի
Ես ուզում եմ յանձնել մի կոյս անարատ։

Պահի՛ր նորան՝ շըրջապատած լի՜ բախտով,
Տո՛ւր կեանքի մէջ ուղեկիցներ ուշադիր.
Ե՛ւ լոյս գարուն, ե՛ւ ծերութիւն անվրդով,
Ե՛ւ խաղաղ յոյս անչար սըրտին պարգեւի՛ր։

Եւ երբ լինի նա թողնելու այս երկիր—
Լուռ գիշերին, թէ լիաղմուկ առաւօտ,
Սիրուն հոգին ընդունելու առաքիր
Դու լաւագոյն հըրեշտակիդ նորա մօտ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ